Երկուստեք բռնել են մի մի հրեշտակներ։ Թէ սոյն հրեշտակների դիրքը և թէ կոնդակի առաջին տողի նկարուածքը փոխառութիւն է այն ժամանակի ընդհանրական հայրապետութեան հրատարակած կոնդակներից։

Կոնդակի շրջանակը վերին անկիւններում կրում է մի մի հրեշտակագլուխ. կոնդակի ճակտին, շրջանակից ներս, նկարուած է աղաւնակերպ Ս. Հոգին ամպերի մէջ։ Նկարներից և ոչ մին չունի հին հայ մանրանկարների նրբարուեստ գեղեցկութիւնը, թէև ըստ բովանդակութեան հետաքրքրական են։ Պատկերների ծաւալն է՝ 0,60×0,41.

Կոնդակի առաջին բառը՝ Յ՞ի՝ թռչնագիր է. շարունակութիւնը, մինչև տողի վերջը մեծ գլխագիր. իմաստի կարևորութիւնն ի նկատի առնելով գրիչը գլխագրերի մեծ մասը գրել է կարմրագեղով։ Ներկայ Հրատարակութեան մէջ ուղղահայեաց գծերը (|) ցոյց են տալիս տողի աւարտը կոնդակի բնագրում։

Սոյն կոնդակը գնել է յիշեալ պ. Յակոբ Կարանեանցը անցեալ 1915-ի ամառը հայ կամաւորներից։